ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1440-Ա « 18 » մարտի 2026թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

1. Երևանի քաղաքապետարանի 2026 թվականի կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների (Երևան քաղաքում «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի պիլոտային ծրագրի, «Բաց կառավարման գործընկերության շաբաթ» և «Կայուն էներգիայի շաբաթ» միջոցառումների մասով) ձեռքբերման նպատակով ստեղծել մասնագիտական խումբ և հաստատել խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների (Երևան քաղաքում «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի պիլոտային ծրագրի, «Բաց կառավարման գործընկերության շաբաթ» և «Կայուն էներգիայի շաբաթ» միջոցառումների մասով) ձեռքբերման մասով գնումների իրականացման պատասխանատու ստորաբաժանում սահմանել սույն որոշման 1-ին կետով ստեղծված մասնագիտական խմբին:

3. Սույն որոշման 1-ին կետով նշված ծառայությունների գնման գործընթացի կազմակերպման վերջնաժամկետ սահմանել 2026 թվականի հոկտեմբերի 10-ը:

4. Գնումների համակարգման գործառույթը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
18.03.2026 թ.
N 1440 - Ա որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Վ. Ջիհանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հատուկ ծրագրերի համակարգող /մասնագիտական խմբի ղեկավար/
Ա. Եղիազարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և գործընկերության ղեկավար
Ս. Հարոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային ներդրումային ծրագրերի ղեկավար
Ս. Միրզոյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրինության օգնական
Մ. Սերոբյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և ներդրումային ծրագրերի օգնական

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**